ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐՈՒԹԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՔԱՐՏԷԶՆԵՐԻ ՀԱՒԱՔԱԾՈՒՆ[1]

ԱՐՏԱԿ ԱՍԱՏՐԵԱՆ (sardarapatasatryan@gmail.com)

ՄՈՒՏՔ

Հայոց ազգագրութեան թանգարանի (ՀԱԹ) հաւաքածուն հարուստ է ու բազմաբովանդակ: 1978ին հիմնադրուած թանգարանի հաւաքածուն շատ արագ հարստացաւ՝ շնորհիւ դաշտային ազգագրական արշաւների, գնումների, հաւաքչական աշխատանքների ու նուիրատուութիւնների:

ՀԱԹի հաւաքածուին առանձին արժէք են տալիս նուիրատուութիւնները, որոնք յաճախ մէկ կամ միքանի նմուշներ չեն, այլ՝ նուիրատուների կողմից տարիների ընթացքում ստեղծած հաւաքածուներ, որոնց նիւթերը - հաւաքածուի միւս նմուշների հետ - կազմում են թեմատիկ մէկ ամբողջութիւն: Յատկապէս արժէքաւոր են Ժիրայր Գաբրիէլեանի[2], Փ. Չիֆթալարեանի[3], Երանուհի Հայտոսթեանի[4], Յակոբ Մոմճեանի[5] եւ այլոց նուիրատուութիւնները: Այս շարքում անգնահատելի տեղ ունի «Թանգարանի բարեկամ» կոչմանն արժանացած Յակոբ Ճելալեանը, որի նուիրատուութիւնների հաւաքածուն բաղկացած է պղնձագործական եւ արծաթագործական առարկաներից, զարդերից, զէնքերից, Կուտինայի յախճապակուց[6]:

2007ին Ճելալեանը ՀԱԹին նուիրաբերեց 130 փորագրանկար՝ մեծմասամբ օտար վարպետների գործեր, որոնցում արտացոլուած են Հայաստանի հետ պատմական տարբեր ժամանակներում տեղի ունեցած իրադարձութիւններ ու դէպքեր: Հաւաքածուն ներառում է տպագիր մամուլ, գրքերի էջեր, քարտէզներ, որոնք տպագրուած են ԺԶ.-ԺԹ. դարերում, Հայաստանից դուրս, եւ պատմաքաղաքական տեղեկատուութեան աղբիւր են հանդիսանում Հայաստանի մասին[7]:

---

[1] Յօդուածը նուիրուած է Յակոբ Ջելալեանի պայծառ յիշատակին:

[2] Տե՛ս՝ ՀԱԹ, ԱԿ-3 ֆոնդ, համար 8225/1-17 պղնձէ ափսէների հաւաքածուն:

[3] Գ. Աղանեան, «Հայկական զինագործութիւնը XIX դարում--XX դարի սկզբին (ըստ Կարնոյ եւ Ախալցխայի նիւթերի)», *Գիտական աշխատութիւններ*, III:2000, էջ 129-36:

[4] ՀԱԹ, համար 7010/1-334 հաւաքածու:

[5] Ա. Ասատրեան, «Յակոբ Մոմճեանի նուիրատուութիւնների հաւաքածուն», *Թանգարան հանդէս*, 2011, էջ 144-152:

[6] Տե՛ս՝ Ս. Պօղոսեան, Ս. Պապիկեան, Ա. Ասատրեան, Զ. Ծատուրեան, Ա. Ճելալեան, *Յակոբ Ճելալեանի նուիրատուութիւնների կատալոգ*, Տիգրան Մեծ, հրատ. Երեւան 2008:

[7] Հաւաքածուն ներառում է նաեւ հայկական տարազի նմուշներ պատկերող նկարներ (Ս. Պօղոսեան, «Կովկասեան տարազով կերպարներ եւրոպական փորագրանկարներում», *Աւանդականը եւ արդիականը հայոց մշակոյթում XVI (Դերենիկ Վարդումեանի ծննդեան 90-ամեակին նուիրուած գիտաժողովի նիւթերի ժողովածու)*, ՀՀ ԳԱԱ Գիտութիւն հրատ., Երեւան,2014, էջ 111-21:

Յատկապէս մեծ արժէք ունեն հաւաքածուի 27 քարտէզները, որոնք տպագրուած են ԺԷ.-ԺԹ. դարերում, Եւրոպայում (Ֆրանսա, Անգլիա, Հոլանտա) եւ հանդիսանում են ժամանակի հեղինակաւոր տպագրական ընկերութիւնների ու լաւագոյն քարտէզագիր-հեղինակների գործունէութեան արդիւնք: Դրանք վերատպութիւններ են աւելի հին շրջանի քարտէզներից եւ ունեն աղբիւրագիտական ու պատմական մեծ արժէք՝ թէ՛ որպէս թանգարանային հաւաքածու եւ թէ՝ պատմաքաղաքական վաւերագրեր[8]:

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Քարտէզ եզրն իյայտ է եկել միջնադարում՝ Վերածննդի դարաշրջանում: Մինչայդ գործածւում էին tabula, descriptionis բառերը: Եզրը ծագում է լատիներէն charta (թերթ, թուղթ) բառից, որն իր հերթին առաջ է եկել յունարէն χαρτης (խարտէս) բառից: Այժմ այս բառն օգտագործւում է աշխարհի մի շարք լեզուներում: Ոչ-պակաս տարածուած է նաեւ լատիներէն mappa բառից ծագող եզրը, որը նշանակում է կտաւի կտոր: Միքանի լեզուներում գործածւում են երկու եզրերն էլ, երբեմն՝ տարբեր նրբիմաստներով, օրինակ՝ անգլերէնում chart եզրով նշում են ծովային եւ օդագնացագիտական քարտէզները, սպաներէնում carta եզրով նշում են ծովային եւ աստղագիտական քարտէզները: Գոյութիւն ունեն նաեւ քարտէզ բառի տիպիկ ազգային անուանումներ. ճափոներէն՝ tizu, հունգարերէն՝ terkep լիտվերէն՝ zemelapis եւն.[9]:

Միջնադարեան Հայաստանում քարտէզ (քարտէս) բառին զուգահեռ գործածւում էին նաեւ աշխարհացոյց, աշխարհագիր, երկրագրութիւն, բառերը: Աշխարհացոյց բառը գործածութեան մէջ է եղել մինչեւ ԺԷ.-ԺԸ. դարերը: Օրինակ՝ 1695ին Ամսթերտամում հրատարակուած քարտէզը կոչւում է «Համատարած աշխարհացոյց»[10], 1778ին Վենետիկում Շահամիր Շահամիրեանի պատուէրով տպագրուած Հայաստանի քարտէզը՝ «Աշխարհացոյց Հայաստանեայց»[11]:

---

[8] Քարտէզները գրանցուած են թանգարանի «Փ» (Փաստաթուղթ) ֆոնդում՝ 8332 համարի տակ եւ թանգարանի քարտէզների միակ հաւաքածուն են, ինչն առաւել արժէքաւոր եւ նպատակային է դարձնում դրանց ուսումնասիրութիւնն ու գիտականօրէն շրջանառուելը: Թանգարանի «Փ» ֆոնդում են պահւում նաեւ համար 299՝ յունարէնով տպագրուած «Փոքր Ասիա-Միջագետք» քարտէզը եւ համար 300 երկրագունդը, որոնք համար 8332 հաւաքածուի մաս չեն կազմում, ուստի այս աշխատանքում դրանց չենք անդրադարձել:

[9] А. Берлянт, *Картография* (Քարտէզագրութիւն), Ասպեկտ պրէսս, Մոսկուա, 2002, էջ 5:

[10] Ս. Տ. Երեմեան, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»ի*, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1963, էջ 17:

[11] Ծ. Գրիգորեան, «Շահամիր Շահամիրեանի "Աշխարհացոյց Հայաստանեաց"-ը», *Բանբեր Մատենադարանի*, 6:1962, էջ 354:

Քարտէզն աշխարհագրական, ինչպէս նաեւ պատմական ու ժամանակագրական տեղեկութեան պահպանման ու փոխանցման արդիւնաւէտ միջոց է: Այն թոյլ է տալիս տարածքի ամբողջական դիտարկում եւ վերլուծութիւն՝ տեղանքի ոչ-մեծ հատուածից մինչեւ երկրագնդի մակերեւոյթն ամբողջութեամբ, արտացոլում պատմաաշխարհագրական տարբեր իրողութիւնները, դրանց յաջորդականութիւնն ու փոխկապակցուածութիւնը[12]:

Քարտէզի եւ քարտէզագրութեան պատմութիւնն անխզելիօրէն կապուած է մարդկային հասարակութեան զարգացման պատմութեան հետ: Ծնունդ առնելով մարդկութեան քաղաքակրթութեան արշալոյսին, գրերի իյայտ գալուց դեռ շատ առաջ, քարտէզագրական պատկերները նախապէս ծառայում էին որպէս սնունդ հայթայթելու եւ որսատեղիների մասին տեղեկութիւն հաղորդելու միջոց: Այս պատկերներն արտում էին ամենատարբեր նիւթերի՝ քարերի (ժայռերի), քարանձաւների պատերի, ոսկրէ թիթեղների, կաւէ սալիկների, մագաղաթի, թղթի վրայ եւն.[13]:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Մեր խնդրից դուրս է տալ ՀԱԹի քարտէզների գիտական դասակարգումն ու տիպաբանումը[14]: Սոյն աշխատանքում քարտէզները խմբաորել ենք հիմք ընդունելով դրանց առնչուածութիւնը Հայաստանին ու հայ ժողովրդի պատմութեանը: Հետեւաբար, քարտէզները խմբաւորել ենք հետեւեալ սկզբունքներով՝ ա) Մեծ Հայքը եւ յարակից տարածքները, բ) Փոքր Ասիան եւ յարակից տարածքները, գ) ԺԹ. դ. ռազմաքաղաքական իրադարձութիւններ պատկերող, եւ դ) աստուածաշնչեան քարտէզներ: Նման խմբաւորման նպատակն է գիտական հանրութեանը հասանելի դարձնել ՀԱԹի քարտէզների հաւաքածուն, մասնագիտական գրականութեան հետ համեմատական վերլուծութեամբ լուսաբանել հաւաքածուի առնչութիւնը Հայաստանին ու հայ ժողովրդի պատմութեանը[15]:

---

[12] Р. А. Жмойдяк, Л. В. Атоян, *Картография* (Քարտէզագրութիւն, դասախօսութիւններ), Մինսկ, 2006, էջ 20-21:

[13] Жмойдяк, Атоян, էջ 8:

[14] Քարտէզների գիտական դասակարգման վերաբերեալ տե՛ս՝ К. Салищев, *Картография* (Քարտէզագրութիւն), Մոսկուա, «Բարձրագոյն դպրոց» հրատ., 1982, էջ 5-10. նաեւ՝ А. Берлянт, *Картография* (Քարտէզագրութիւն), Ասպեկտ պրէսս, Մոսկուա, 2002, էջ 5-20. նաեւ՝ Жмойдяк-Атоян, էջ 1-7. նաեւ՝ Ռ. Գալչեան, *Հայաստանը համաշխարհային քարտէզագրութեան մէջ*, Փինթինֆօ հրատ., Երեւան, 2005, էջ 16-29, 64. նոյնի՝ վերահրատարակութիւնը՝ Երեւան, Փրինթինֆօ հրատ., Երեւան, 2015, էջ 19-29. նաեւ՝ R. Galichian, "A Brief History of the Maps of Armenia," *Բանբեր հայագիտութեան*, 1:2013, էջ 83-106:

[15] Այս աշխատանքում անդրադարձ չենք կատարել միայն հաւաքածուի համար 130 յունալեզու «Կրետէ կղզին» քարտէզին, քանի, որ վերջինս իր ընդգրկման տա-

ՄԵԾ ՀԱՅՔԸ ԵՒ ՅԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՊԱՏԿԵՐՈՂ ՔԱՐՏԷԶՆԵՐ

Ք.ա. Զ. դարի բաբելոնեան կաւէ սալիկը մեզ հասած աշխարհի հնագոյն քարտէզն է, որտեղ աշխարհը պատկերուած է շրջանաձեւ՝ շրջապատուած «դառը» ջրերով, որոնց մէջ կան եօթ կղզիներ: Այս քարտէզում աշխարհի կենտրոնը Բաբելոնն է, որի մօտ նշուած են Ասորեստանն ու Հայաստանը[16]:

Հերոդոտոսը (484-425 Ք.ա.) իր *Պատմութեան* մէջ նշում է, թէ միլեթացի Արիստագորասը Սպարտայում Կլէոմենէսին ցուցադրել է «*պղնձէ մի տախտակ (քարտէզ - Ա.Ա.), որի վրայ փորագրուած էր երկրի ուրուագիծը, ամբողջ ծովն ու բոլոր գետերը: Լիւդիացիներից դէպի արեւելք,- պատմում է Արիստագորասը,- բնակւում են փռիգները... նրանց յաջորդում են կապադովկիացիները... սրանց սահմանակից են կիլիկեցիները, որոնք տարածւում են մինչեւ այն ծովը, որտեղ գտնւում է Կիպրոս կղզին: ... Այստեղ կիլիկեցիներին յաջորդում են արմէնները...* »[17]:

Հայաստանի աշխարհագրական նկարագրութիւնն ընդհանուր առմամբ պահպանուել է Հերոդոտոսի *Պատմութեան* մէջ[18]: Առաւել ամբողջական նկարագրութիւններ տուել են յոյն աշխարհագէտ ամասիացի Ստրաբոնը[19] (65-25), հռոմէացի հեղինակ Պլինիոս Աւագը[20] (23-97), եւ մասնաւորապէս յոյն աշխարհագէտ Կլաւդիոս Պտղոմէոսը (90-167) իր *Աշխարհագրութիւն* աշխատութեան մէջ: Շատ կարեւոր է Պտղոմէոսի այն տեղեկութիւնը, թէ Կուր գետը հանդիսանում է Մեծ Հայքի հիւսիսային սահմանը[21]:

ռածքներով եւ աշխարհագրութեամբ չի առնչւում Հայաստանին ու նրա հետ կապուած պատմա- կամ ռազմա-քաղաքական իրադարձութիւններին:

[16] Գալչեան, *Հայաստանը համաշխարհային*, էջ 16, 64. նաեւ նոյնի՝ վերահրատարակութիւնը, էջ 19, 66. նաեւ՝ Galichian, էջ 83:

[17] Հերոդոտոս, *Պատմութիւն ինը գրքից*, թարգմ.՝ Ս. Կրկեաշարեան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1986, էջ 305:

[18] Հերոդոտոս, էջ 79-80, 197, 305, 306-07, 568-78:

[19] *Օտար աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին, N 1 Ստրաբոն*, քաղեց եւ թարգ. Հ. Աճառեան, Պետական համալսարանի հրատ., Երեւան, 1940. նաեւ՝ Պ. Յովհաննիսեան, Ա. Մովսիսեան, *Հայ ժողովրդի պատմութեան քրեստոմատիա, հատոր 1 (Հնագոյն ժամանակներից մինչեւ Ք.յ. 298 թ.)*, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 2007, էջ 279-86:

[20] *Հայ ժողովրդի պատմութիւն, հատոր 1,* Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1971, էջ 836-38. նաեւ՝ *Հայ ժողովրդի պատմութեան քրեստոմատիա, հատոր 1*, էջ 287-91:

[21] Երեմեան, էջ 69. նաեւ՝ *Հայ ժողովրդի պատմութիւն, հատոր 1*, էջ 839. նաեւ՝ *Հայաստանի ազգային ատլաս, հատոր Բ*, Գէոդեզիայի եւ քարտէզագրութեան կենտրոն» ՊՈԱԿ, Երեւան, 2008, էջ 7. նաեւ՝ Պ. Յովհաննիսեան, Ա. Մովսիսեան, *Հայ ժողովրդի պատմութեան քրեստոմատիա, հատոր 2, (III դարի վերջերից մինչեւ IX դարի կէսերը)*, ԵՊՀ հրատ., Երեւան, 2011, էջ 9-14. նաեւ՝ Մ. Մալ-

Ըստ Պտղոմէոսի (Գիրք 5, գլուխ 13, § 1)՝ Մեծ Հայքի սահմանը հիւսիսից կազմում է Կողքիսի մի մասը, ապա Վիրքը եւ Աղուանքը՝ Կուր գետով: Արեւմուտքից սահմանագիծն անցնում է Եփրատ գետով, որը բաժանում էր Մեծ Հայքը Կապադովկիայից (այսինքն՝ վերջինիս կազմի մէջ մտնող Փոքր Հայքից), ապա Եփրատից հիւսիս-արեւելք ձգուող Մոսխական լեռներով, մինչեւ Կողքիս: Արեւելքից Մեծ Հայքի սահմանն է Վրկանից (Կասպից) ծովի մասը՝ Կուր գետի գետաբերանից մինչեւ 79° 45 Ր-43° 20 Ր վրայ գտնուող կէտը: Այնուհետեւ սահմանն անցնում էր յիշեալ կէտից դէպի արեւմուտք Կասպից լեռներով, որոնք բաժանում են Մեծ Հայքը Մեդիայից: Հարաւից Մեծ Հայքը սահմանակից է Միջագետքին, սկսած Եփրատ գետից, Տաւրոս լեռներով եւ Տիգրիս գետով: Ապա սահմանագիծն անցնում է Նիփատէս (Նպատ), բաժանելով Մեծ Հայքը հարաւում գտնուող Ասորեստանից, մինչեւ Կասպից լեռները[22]:

Վերը նկարագրուած աշխարհագրական ընդգրկումն ունեն հաւաքածուի համար 105, 111, 112, 117, 120, 126 եւ 127 քարտէզները[23]: Բոլոր եօթ քարտէզներում Մեծ Հայքի հիւսիսում (արեւմուտքից արեւելք) նշուած են Կողքիսը, Իբերիան եւ Աղուանքը, հարաւում՝ Միջագետքն ու Ասորեստանը, արեւելքում՝ Կասպից ծովը, Մեդիան, արեւմուտքում՝ Պոնտոսը եւ Կապադովկիան:

Համար 111 (Armenia, Colchis, Iberia, Albania & c.) քարտէզն իր աշխարհագրական ընդգրկմամբ եւ վարչական բաժանմամբ հիմնականում համապատասխանում է Պտղոմէոսի «Ասիայի III աղիւսակ» (Asiae tabula tertia) քարտէզին[24]: Քարտէզի կենտրոնում Մեծ Հայքն է, որին հիւսիսից սահմանակից են Կողքիսը, Իբերիան, Աղուանքը, հարաւից՝ Միջագետքը. արեւմուտքից Մեծ Հայքի սահմանները հասնում են մինչեւ Եփրատ գետը: Սրա հետ մէկտեղ քարտէզում կան անճշտութիւններ. Արեւելքում Մեծ Հայ-

---

խասեան, «Մեծ Հայքի Թագաւորութեան սահմաններն ըստ Կլաւդիոս Պտղոմէոսի "Աշխարհագրութիւն" երկի», *Հայաստանի Հանրապետութեան եւ մերձաւոր արտասահմանի երկրների տնտեսութեան զարգացման եւ տեղաբաշխման ժամանակակից հիմնախնդիրները (գիտական յօդուածների ժողովածու)*, Երեւանի պետական համալսարան, Երեւան, 2017, էջ 39:

[22] Տե՛ս՝ ծանօթ. 21:

[23] Քարտէզների հաւաքածուն գրանցուած է 8332 համարի ներքոյ՝ 104-130 հերթական համարներով՝ 8332/104, 8332/105, եւն.: Այստեղ եւ յետագայում նշել ենք միայն քարտէզների համարները:

[24] Հաւաքածուն չի ներառում քարտէզներ (կամ դրանց վերատպութիւններ) Պտղոմէոսի *Ասիայի III քարտէզ*ից: Հմմտ.՝ Գալչեան, էջ 92-93, 118-19, 130-31, 166-69, 174-75, 184. նաեւ նոյնի վերահրատարակութիւնը՝ էջ 96-97, 118-19, 132-33, 164, 166-67, 169. նաեւ՝ Կ. Մութաֆեան, Է. Վ. Լով, *Հայաստանի պատմական ատլաս. Մերձաւոր Արեւելքը եւ Կովկասը մ.թ.ա. VII դարից մինչեւ XXI դար*, Տիգրան Մեծ հրատ., Երեւան, 2017, էջ 94-95:

քի սահմանները չեն հասնում մինչեւ Վրկանայ (Կասպից) ծով, այլ սահմանափակուած են Կուրի ու Արաքսի միջագետքում, հիւսիսային սահմանը գծուած է զգալիօրէն դէպի հարաւ՝ յօգուտ Իբերիայի, Կուր գետը գրեթէ ամբողջութեամբ հոսում է Իբերիայի տարածքով, իսկ վերջինիս հարաւային սահմանն անցնում է գրեթէ անմիջապէս Սեւանայ լճի հիւսիսով (նկար 1):

Համար 112 (Colchis, Iberia, Albania, Armenia, Mesopotamia, Assyria, et Babylonia), 117 (Armenia, Mesopotamia, Babylonia, Assyria), 120 (Armenia, Mesopotamia, Assyria et Babylonia), 126 եւ 127 քարտէզների համար դարձեալ որպէս սկզբնաղբիւր են ծառայել Պտղոմէոսի քարտէզները կամ դրանց վերատպութիւնները. քարտէզների աշխարհագրական բաժանումը եւ տեղանունները տրուած են ըստ Պտղոմէոսի[25]: Այս քարտէզների ընդգրկման սահմանները հարաւում հասնում են մինչեւ Պարսից ծոց:

Այս խմբում ուշադրութեան են արժանի մասնաւորապէս համար 126 եւ 127 քարտէզները:

Համար 126 (Byzantinisches Reich, ôstliches blatt՝ Բիւզանդական Կայսրութիւն, արեւելեան թուղթ) քարտէզը ԺԹ. դարի գերմանացի աշխարհագէտ ու պատմաբան Կարլ Ֆոն Սպրունէրի (1803-92) «Պատմական ատլաս»ից է (K. v. Sprunner, *Histor. Atlas*) կամ դրա վերատպութիւնն է: Ի տարբերութիւն հաւաքածուի միւս քարտէզների, որտեղ Հայաստանը նշուած է Մեծ Հայք (Armenia Maior) կամ ուղղակի Հայաստան (Armenia) անուններով, այս քարտէզում Մեծ Հայքը բաժանուած է արեւելեան եւ արեւմտեան հատուածների: Արեւմտեան հատուածը նշուած է Armenia, արեւելեանը՝ Haiastan անունով: Տեղանունների մի մասը նոյնպէս տրուած է լատիներէն եւ լատինատառ տեղական անուանումներով, օրինակ՝ Gogarene-Gugarkh (Գոգարենէ-Գուգարք), Otene-Uti (Օտենէ-Ուտի(ք), Phaitakaran (Փայտակարան), Vaspurakan, Turuberan, իսկ Արաքս գետը նշուած է Araxe, Eraskh եւ Rakhsi անուններով[26] (նկար 2):

Համար 127 (Albania, Iberia, Colchis, Armenia, Mesopotamia, Babylonia, Assyria) քարտէզը դարձեալ Սպրունէրի հրատարակած ատլասից է (*Atlas Antiqus* N XXVII)[27]: Այս քարտէզում Մեծ Հայքն ու Փոքր Հայքը նշուած են լատիներէն՝ Armenia Maior եւ Armenia Minor: Միաժամանակ մանրամասն նշուած են Մեծ Հայքի տեղանունները՝ լատիներէն եւ լատինատառ տեղական անուանումներով, օրինակ՝ Basoropeda-Vaspuracan, Otene–Uti, Sakasene-Artsakh, Caspiane-Phaitakaran, Siracene-Schirak, Cotacene-Kotaikh եւն.: Կարեւոր է նշել, որ քարտէզում Գուգարքը նշուած է Մեծ Հայքի կազ-

---

[25] Տե՛ս՝ ծանօթ. 24:

[26] Տե՛ս՝ Գալչեան, էջ 242-43. նաեւ նոյնի վերահրատարակութիւնը՝ էջ 240-41:

[27] Տե՛ս՝ ծանօթ. 26:

մում եւ Կուր գետը հանդիսանում է Մեծ Հայքի հիւսիսային սահմանը[28] (նկար 3):

Համար 105 քարտէզը (Armenia Vetvs In Quatuor Partes ad Tempora Ivstiniani Imp) (Հայաստանը՝ բաժանուած չորս մասի՝ Յուստինիանոսի օրոք) պատկերում է Հայաստանի (Մեծ եւ Փոքր Հայքեր) վարչական բաժանումը՝ Յուստինիանոս Ա. կայսեր (483-565) ժամանակաշրջանում (հեղինակ՝ Ֆիլիպ դէ լա Ռու, 1653ին)[29]: Քարտէզում պատկերուած են Մեծ Հայքը (Armenia Maior), Ա., Բ. եւ Գ. Հայքերը (Armenia Prima, Armenia Secvnda, Armenia Tertia): Դ. Հայքը, որը պատմական Ծոփքն է[30], քարտէզում նշուած չէ, սակայն նշուած են Անձիտ (քարտէզում՝ Anzetene, Antizena, Anaeita) եւ Բալահովիտ (քարտէզում՝ Balabithena)[31] գաւառները[32] (նկար 4):

Բաժինն աւարտելուց առաջ նպատակայարմար է անդրադառնալ եւս երկու քարտէզի: Համար 104 քարտէզը (Tabvla Asia V) վերատպութիւն (կրկնօրինակ) է Պտղոմէոսի *Աշխարհագրութիւն* աշխատութիւնից, ընդգրկում է Ասորեստանը, Մեդիան, Պարթեւաստանը (Parthia), Պարսկաստանը (Persia), Հիրկանիան (Hyrcania) եւ Կարմանիան, իսկ արեւմուտքում (հիւսիսից հարաւ), որպէս յարակից տարածքներ (երկրներ) նշուած են Հայաստանը, Միջագետքը եւ Անապատային Արաբիան քարտէզի վերեւի երկու անկիւններում կան լատինատառ գրութիւններ՝ Della Geografia gi Tolomeo եւ՝ Libro sefto (նկար 5):

Առանձնայատուկ ուշադրութեան է արժանի քարտէզի հակառակ երեսը, որտեղ կայ լատինատառ գրութիւն՝ երկու սիւնակով: Ա. սիւնակի վերեւում գրուած է Della Geografia gi Tolomeo, վերնագիրն է՝ "Il Sito Dell'Arabia", եկրորդինը համապատասխանաբար՝ "Libro sefto Tavola Qvinta D'Asia Antica": Բ. սիւնակի գրութիւնն ունի համարակալում՝ 136, Ա. սիւնակի համարակալումը ջնջուած է: Այս ամէնը թոյլ է տալիս ասելու, որ քարտէզը էջ է (վերահրատարակութիւն) Պտղոմէոսի *Աշխարհագրութիւն*ից:

Նոյն վարչական բաժանումն ունի համար 113 քարտէզը (Regiones intra Mare Hyrcanum, Oxum Fl. Indicum Pelagus et Sin. Persicum Sit) (Վրկանայ -

---

[28] Տե՛ս՝ ծանօթ. 21:

[29] Համեմատութեան համար տե՛ս՝ Գալչեան, էջ 168, 171. նաեւ նոյնի վեահրատարակութիւնը՝ էջ 169. նաեւ Մութաֆեան-Լով, էջ, 40-41, 120-21:

[30] Երեմեան, էջ 106. նաեւ՝ Բ. Յարութիւնեան, *Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, մաս Ա, Արեւմտեան եւ հարաւային աշխարհներ*, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 2001, էջ 114-45. նաեւ՝ *Հայ ժողովրդի պատմութեան քրեստոմատիա, հատոր 2*, էջ 15:

[31] Երեմեան, էջ 107:

[32] Տեղանունների եւ դրանց տարընթերցումների մասին առաւել մանրամասն տե՛ս՝ Յարութիւնեան, 2001, էջ 117:

Կասպից - ծովի, Օքսում (Ամուդարիա) գետի, Հնդկական ծովի եւ Պարսից ծոցի միջեւ գտնուող տարածքները) եւ տեղանուններն էլ տրուած են ըստ Պտղոմէոսի, սակայն կազմուած է ԺԹ. դարի քարտէզագրական չափանիշերին համապատասխան (նկար 6):

ՓՈՔՐ ԱՍԻԱՆ ԵՒ ՅԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՊԱՏԿԵՐՈՂ ՔԱՐՏԷԶՆԵՐ

Փոքր Ասիան (Asia Minor) եւ յարակից տարածքները, այդ թւում նաեւ Հայաստանը (պատմական Մեծ կամ Փոքր Հայքերը) պատկերող քարտէզներից (համար 106, 107, 116, 118, 119, 121 եւ 122) երկուսում (համար 119 եւ 121) պատկերուած է Կիւրոսի արշաւանքի[33], ինչպէս նաեւ Կունաքսայի ճակատամարտից յետոյ Հայաստանի վրայով նահանջի ճանապարհը բռնած տասը հազար վարձկան յոյների նահանջի երթուղին: Երկու քարտէզներում էլ նշուած են Սարդէսը, Կունաքսան, Կենտրիտիս գետը (Արեւելեան Տիգրիս, այժմ Բոհտան սու)[34], որն անցնելուց յետոյ յոյն վարձկանները մտան Հայաստան եւ Տրապիզոն, որտեղից ծովով հասան Պերգամոն քաղաք:

Համար 121ում (Cyri Expeditio) (Կիւրոսի արշաւանքը), ի տարբերութիւն համար 119ի (Tableau de la Retraite des Dix Mille), նշուած չէ Կիւրոսին Միջերկրական ծովով օգնութեան շտապող զօրքերի ճանապարհը, իսկ համար 119ում նշուած է միայն Եփեսոսից (Փոքր Ասիա) օգնութեան եկող զօրքի երթուղին[35]:

Համար 107 քարտէզի (Patriarchatus Constantinopolitani) (Կոստանդնուպոլսի պատրիարքութիւն) հեղինակն է ֆրանսացի քարտէզագէտ, "Թագաւորական աշխարհագէտ" Նիկոլաս Սանսոնը (1600-67)[36]: Քարտէզում

---

[33] 401ի գարնանը, դուրս գալով Սարդէսից, Լիկիայի, Փռիւգիայի եւ Կապադովկիայի սատրապ Կիւրոս Կրտսերը, մեծաթիւ զօրքով, արշաւանք սկսեց ընդդէմ հարազատ եղբօր, պարսից արքայ Արտաքսերքսէս Բ. Մեմնոնի (404-358): Անցնելով Փոքր Ասիան՝ արշաւող բանակը, որի կազմում էր յոյն վարձկանների մի ջոկատ, Կիլիկիայի ու Ասորիքի վրայով մուտք գործեց Միջագետք եւ Եփրատի ձախ ափով ուղղուեց հարաւ: Չհասած Բաբելոն քաղաքին՝ Կունաքսայի մօտ տեղի ունեցաւ վճռական ճակատամարտը, որի ելքն աղէտաբեր եղաւ Կիւրոսի համար: Նա սպանուեց, իսկ բանակը քայքայուեց, ցաքուցրիւ եղաւ: (Կիւրոսի արշաւանքի մասին մանրամասն տե՛ս՝ Քսենոփոն, *Անաբասիս*, թարգմ.՝ Ս. Կրկեաշարեան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1970, էջ 10, 88, 223, 226-227, 259 (ծանօթ. 7):

[34] Քսենոփոն, էջ 88, 226. նաեւ՝ *Հայ ժողովրդի պատմութիւն, հտր. 1*, էջ 27:

[35] Կիւրոս Կրտսերին ծովով օգնութեան էին գնում 25 նաւ Եփեսոսից եւ 35 նաւ՝ Պելոպոնէսից (*Հայաստանի ազգային ատլաս, հատոր Բ*, Գէոդեզիայի եւ քարտէզագրութեան կենտրոն, ՊՈԱԿ, Երեւան, 2008, էջ 19՝ «Կիւրոս կրտսերի վարձկան տաս հազար յոյների արշաւանքի եւ Հայաստանով նահանջի երթուղին» քարտէզը:

[36] Գալչեան, էջ 26, 174-75. նաեւ նոյնի վերահրատարակութիւնը՝ էջ 27, 172-73:

պատկերուած է Կոստանդնուպոլսի պատրիարքութեանը պատկանող երկրների վարչական բաժանումը: Պատրիարքութիւնն ընդգրկում է ամբողջ Փոքր Ասիան (բացառութեամբ Կիլիկիայի, որի տարածքն ընդգրկուած է Անտիոքի պատրիարքութեան կազմում), Բալկանեան թերակղզու մի մասը (Թրակիան) եւ Լազիկէն (Մեծ Հայքի հիւսիսում): Արեւելքում քարտէզի ընդգրկման տարածքները հասնում են մինչեւ Հայաստան (Մեծ Հայք), սակայն այստեղ, ինչպէս նաեւ Հայաստանից հիւսիս տեղանունները նշուած չեն: Մեծ Հայքում նշուած են Սեւան, Վան եւ Ուրմիա լճերը եւ Տաւրոսեան լեռնաշղթան, որից հարաւ նշուած է Անտիոքի պատրիարքութիւնը (տեղանունները նշուած չեն):

Փոքր Ասիայի հիւսիսում (Եւքսինեան Պոնտոսի - Սեւ ծով - հարաւում) նշուած են կայսրութեան կազմի մէջ մտնող երկրամասերը՝ Պողեմոնական Պոնտոսը (Pontus Polemoniacus), Հելենոյ Պոնտոսը[37] (Heleno Pontvs)՝ Ամասիա (Amasia) կենտրոնով, Պափլագոնիան (Paphlagonia), Հոնորիադան (Honorias)[38], Բիւթանիան (Bithynia): Պողեմոնական Պոնտոսից հարաւ նշուած է Փոքր Հայքը՝ բաժանուած երկու մասի՝ Ա. Հայք (Armenia Prima) եւ Բ. Հայք (Armenia Secunda): Ինչպէս տեսնում ենք, քարտէզում արտացոլուած է Գ.-Դ. դդ. Փոքր Ասիայում գոյութիւն ունեցող վարչական բաժանումը[39]:

Համար 116 (Asia Minor), 118 (Carte de l'Asie Mineure Ancienne), 122 (ASIE MINEURE) քարտէզներում Փոքր Ասիայի երկրները պատկերուած եւ սահմանագծուած են որպէս ինքնուրոյն վարչական միաւորներ: Այս քարտէզներում նոյնպէս ընդգրկման տարածքներն արեւելքում հասնում են մինչեւ Մեծ Հայք:

Համար 122ում Փոքր Հայք անունը նշուած չէ. վերջինիս տարածքը զբաղեցնում են Պոնտոսը եւ Կապադովկիան: Փոխարէնը մանրամասն նշուած են Մեծ Հայքի տեղանունները:

---

[37] Այս երկրամասը նախապէս կոչւում էր Դիոսպոնտոս (Diospontus), Հելենոպոնտոս (Helenopontus) է վերանուանուել Կոստանդին Մեծի (306-37) օրօք՝ ի պատիւ նրա մօր՝ Հեղինէի (Ն. Ադոնց, *Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում*, Հայաստան հրատ., Երեւան, 1987, էջ 101-02):

[38] Հոնորիադան կազմուել է Թէոդոս Ա. Մեծ կայսեր օրօք (379-95), գլխաւորապէս Արեւելեան Բիւթանիայի հողերից՝ ի պատիւ նրա որդու՝ Հոնորիոսի՝ 384ին (Ադոնց, էջ 102):

[39] 297ին, Հռոմէական Կայսրութիւնը բաժանուեց 12 դիոցէզների (վարչական միաւորներ), որոնցից երկուսը՝ Oriens եւ Pontica, կազմուած էին ասիական ծայրագոյն տիրոյթներից: Համաձայն Դիոկղետիանոս կայսեր (284-305) նահանգային բարենորոգման (297 թ.) վերը թուարկուած երկրամասերը մտնում էին Հռոմէական Կայսրութեան Pontica դիոցէզի մէջ: Փոքր Ասիայի վարչական բաժանումների մասին մանրամասն տե՛ս՝ Ադոնց, էջ 81-106:

Համար 118 քարտէզում Փոքր Հայքը (Armenia Minore) նշուած է, սակայն ոչ որպէս առանձին վարչատարածքային միաւոր, այլ գտնուում է Կապադովկիայի կազմում: Սա ցոյց է տալիս, որ հեղինակը (Մ. Լափի, ֆրանսացի գնդապետ), 1831ին քարտէզը կազմելիս, ի թիւս այլ աղբիւրների, օգտուել է նաեւ Պտղոմէոսի *Աշխարհագրութիւն*ից՝ մասնաւորապէս՝ Պտղոմէոսի «Ասիայի III Աղիւսակ» քարտէզից[40]:

ԺԹ. ԴԱՐԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԱՏԿԵՐՈՂ ՔԱՐՏԷԶՆԵՐ

Յաջորդ խումբը կազմում են այն քարտէզները, որոնցում արտացոլուած են Հայաստանում ԺԹ. դարում պատահած աշխարհաքաղաքական իրադարձութիւններ:

Համար 123ում (Turquie d'Asie et les Provinces du Caucase) պատկերուած է Հայաստանում 1826-28ի ռուս-պարսկական երկրորդ 1828-29ի ռուս-թուրքական պատերազմներից յետոյ գոյութիւն ունեցող վարչական բաժանումը: Ուշագրաւ է, որ այս քարտէզում Էրզրումի վիլայէթը[41] նշուած է Armenie, իսկ Հայկական մարզը նշուած է Armenie Russe անունով[42]: Կարսը նշուած է Օսմանեան Կայսրութեան կազմում[43] (նկար 7):

---

[40] Պտղոմէոսի ժամանակ Փոքր Հայքը վարչականօրէն գտնուում էր Կապադովկիայի կազմում (Երեմեան, էջ 15, ծանօթ. 2):

[41] Ըստ 1555 Մայիսի 29ին Ամասիայում կնքուած թուրք-պարսկական հաշտութեան պայմանագրի՝ Հայաստանը բաժանուեց Օսմանեան Թուրքիայի եւ Իրանի միջեւ: Թուրքիային անցան Արեւմտեան Հայաստանի գաւառները, իսկ Իրանին՝ Արեւելեան Հայաստանն ու Վրաստանի մեծ մասը, ինչպէս նաեւ՝ Անդրկովկասի արեւելեան շրջանները (այժմեան Ադրբեջանի տարածքը): Արեւմտեան Հայաստանում կազմաւորուեցին Էրզրումի (Կարինի), Վանի, Կարսի, Ախալցխայի, Սեբաստիայի, Տիարպեքիրի, աւելի ուշ նաեւ՝ Խարբերդի, Պիթլիսի (Բաղէշի), Տրապիզոնի էյալէթները, որոնք յետագայում վերանուանուեցին վիլայէթներ: Դրանցից ամենամեծն Էրզրումի (Կարին) վիլայէթն էր, որի փաշան օժտուած էր սերաքիարի (փոխարքայի) իրաւունքներով: Պատահական չէ, որ այս շրջանի պատմական բազմաթիւ քարտէզներում Էրզրումի նահանգը (էյալէթը) նոյնացուում էր ամբողջ Հայաստանի՝ Արմենիայի հետ (մանրամասն տե՛ս՝ Ա. Մելքոնեան, *Էրզրում, (պատմաժողովրդագրական ուսումնասիրութիւն)*, Հայաստան ԳԱԱ հրատ., Երեւան, 1994, էջ 28-29):

[42] 1828 Փետրուարի 10ին (22ին) կնքուած Թուրքմենչայի պայմանագրով ռուս-պարսկական պետական սահմանագիծը հարաւում հասցուեց մինչեւ Արաքս գետը: Պարսկաստանը պաշտօնապէս ճանաչեց Երեւանի ու Նախիջեւանի խանութիւնների եւ Օրդուբադի գաւառի միացումը Ռուսաստանին (*Հայ ժողովրդի պատմութիւն, հատոր V*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1974, էջ 170): 1828 Մարտի 20ին Նիկոլայ Ա.ը, Թուրքմենչայի պայմանագիրը վաւերացնելուց անմիջապէս յետոյ ստորագրած հրամանագրով ահստատում էր. «Համաձայն Պարսկաստանի հետ կնքուած պայմանագրի, հրամայում եմ՝ Պարսկաստանից

Համար 129՝ (The Turkish Empire) քարտէզը պատկերում է Ղրիմի պատերազմի գլխաւոր թատերաբեմերը: Այնտեղ նշուած են Մոլտովան, Վալախիան, Բեսարաբիան, Սուրբ Նիկոլայի ամրոցը, Ղրիմի կարեւոր ռազմական խարիսխ Սեւաստոպոլը, Պախչիսարայը, Սիմֆերոպոլը: Հոծ գծով նշուած է ռուսական զօրքերի տեղաշարժի ուղին՝ Russian Military Road: Կովկասեան ճակատում նշուած են Կարսը, Ախալցխան, Արտահանը[44]:

Համար 128ում (The Seat of War in Asia) պատկերուած է Ղրիմի պատերազմի կովկասեան ռազմաճակատը: Մանրամասն նշուած են տեղանունները՝ Կարսը, Ախալքալաքը, Երեւանը, Ախալցխան, Ալեքսանդրապոլը, Թիֆլիսը, Պաթումը, Օզուրգեթին:

Քարտէզի ներքեւում պատկերուած է Կարսը՝ յարակից տարածքներով: Կարեւոր կէտերից նշուած են Կարսը եւ Օլթին:

Քարտէզը բնօրինակ-էջ է *The Illustrated London News* շաբաթաթերթի 1877 Մայիսի 12ին լոյս տեսած 453րդ համարից:

Համար 125ում՝ Russia (South part), Կարսը նշուած է Ռուսական Կայսրութեան կազմում[45]:

Ռուսաստանին միացուած Երեւանի եւ Նախիջեւանի խանութիւններն այսուհետ բոլոր գործերում անուանել Հայկական մարզ եւ այն ներմուծել մեր տիտղոսի մէջ»: Հայկական մարզը բաժանւում էր Երեւանի ու Նախիջեւանի գաւառների ու Օրդուբադի օկրուգի (*Հայ ժողովրդի պատմութիւն, հատոր V*, էջ 204-5):

[43] 1828-29՝ ռուս-թուրքական պատերազմի աւարտից յետոյ (1829 Սեպտեմբերի 2ին (14) կնքուեց Ադրիանապոլսի հաշտութեան պայմանագիրը Թուրքիային վերադարձուեցին Էրզրումը, Արտահանը, Պայազէտը, Ալաշկերտը, Կարսը եւ Արեւմտեան Հայաստանի միւս շրջանները, որոնք նախապէս գրաւուել էին Կովկասեան զօրաբանակի կողմից (*Հայ ժողովրդի պատմութիւն, հատոր V*, էջ 189-90):

[44] 1853ին սկսւում է Ղրիմի պատերազմը՝ Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ: Պատերազմում Ռուսաստանը ձգտում էր գրաւել Արեւմտեան Հայաստանը, Վոսփորի եւ Տարտանէլի նեղուցները, Պալքանները, իսկ Թուրքիան՝ Կովկասը: 1855ի ամռանը ռուսական բանակին յաջողուեց գրաւել Պայազէտը, իսկ Նոյեմբերին՝ ռազմավարական կարեւոր նշանակութիւն ունեցող Կարսը: 1856 Մարտի 30ին Փարիզում կնքուած հաշտութեան պայմանագրով Արեւմտեան Հայաստանում գրաւուած բոլոր շրջանները (այդ թւում Կարսը) վերադարձուեցին Թուրքիային: Փոխադարձաբար Ռուսաստանը վերադարձրեց Ղրիմում կորցրած հողերը (*Հայ ժողովրդի պատմութիւն, հատոր V*, էջ 248-250):

[45] 1877-78՝ ռուս-թուրքական պատերազմի ռուսական խոշոր յաղթանակներից մէկը Կարսի գրաւումն էր եւ նրա միացումը Հայաստանին: Սան-Ստեֆանոյի (1878 Փետրուարի 19) եւ Պերլինի պայմանագրերով Կարսը, Արտահանը եւ Պաթումը միացուեցին Ռուսաստանին: (1877-78ի ռուս-թուրքական պատերազմների մասին մանրամասն տե՛ս՝ *Հայ ժողովրդի պատմութիւն, հատոր V*, էջ 176-92, 243-53):

ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԵԱՆ ՔԱՐՏԷԶՆԵՐ

Հաւաքածուում ներառուած քսանեօթ քարտէզներից չորսը (106, 110, 114, 115) պատկանում են աստուածաշնչեան քարտէզների (վանական)[46] տիպին: Դրանցում պատկերուած են աստուածաշնչեան երկրներն ու վայրերը, նշուած են դրանց մասին այս կամ այն չափով տեղեկութիւններ:

Համար 106ի (Lvmen Historiarvm՝ Արեւելքի պատմութիւն) ընդգրկման տարածքներն են հիւսիսում՝ Սկիւթիա, Սարմատիա եւ Թաթարստան, հարաւում՝ Բաբելոն, Արաբիա, արեւելքում՝ Մեդիա, Պարսկաստան, արեւմուտքում՝ Փոքր Ասիա:

Փոքր Ասիայում նշուած են տեղանունները, այդ թւում՝ Փոքր Հայքը, սակայն վարչական միաւորները սահմանագծուած չեն:

Քարտէզում կան անճշտութիւններ, մասնաւորապէս՝ Մեծ Հայքը պատկերուած է իր պատմա-աշխարհագրական տարածքից զգալիօրէն հարաւ, Արաքս գետը չի միանում Կուրին, այլ ուղղակի թափւում է Կասպից ծով: Այս ամէնով հանդերձ՝ քարտէզը մեծ կարեւորութիւն է ներկայացնում, քանի որ այստեղ նշուած են Մեծ եւ Փոքր Հայքերը՝ եւ ընդգրկում են իրենց պատմա-աշխարհագրական տարածքները գրեթէ ամբողջութեամբ:

Համար 110ը (Mesopotamia with Canaan & other parts of the East, Adapted to the Histories of Abraham, Isaac & Jacob) անգլերէն է: Քարտէզի հիւսիսում, գրեթէ իր պատմական տարածքի վրայ, նշուած է Հայաստանը (Armenia), նշուած են Կուր (Kur or Cyrus R.) եւ Արաքս (Araxes R.) գետերը եւ Մասիսը (M. Ararat):

Առանձնայատուկ հետաքրքրութիւն են ներկայացնում համար 114 (Carte du Paradis Terrestre, du Mont Ararat et de la Ville de Babel) եւ 115 (Carte Pays ou probablement a été le Paradis terrestre, la plaine de Scinhar et la Montagne sur laquelle l'Arche s'est arrété suivant celte Histoire) քարտէզները: Ի տարբերութիւն համար 110ի, այս քարտէզներում նշուած են Հայաստանի մայրաքաղաք Երեւանը (Erivan), Նախիջեւանը (Nakhchavan՝ համար 114ում եւ Nackshivan 115ում) եւ Էջմիածինը. ընդ որում, Էջմիածինը նշուած է հետեւեալ կերպ՝ «Ejmiadzin ou les 3 Eglises» (նկար 8): Այս երեւոյթը բացատրւում է նրանով, որ ԺԵ. դարից սկսած, երբ Արեւմտեան Եւրոպան սկսեց զբաղուել քարտէզագրութեամբ եւ սկսուեց քարտէզների տպագրութեան գործը, Արեւելքի երկրներից ամէնից մեծ ուշադրութեան թերեւս արժանանում է, Պաղեստինից եւ Ասորիքից յետոյ, Հայաստանը, որը միջնադարեան Եւրոպայի եկեղեցական միջավայրում դիտւում էր այն երկիրը, որտեղ գտնուել է դրախտը[47]: ԺԵ.-ԺԶ. դդ. Եւրոպայում տպագ-

[46] Գալչեան, էջ 20-21. նաեւ նոյնի վերահրատարակութիւնը՝ էջ 22-23:

[47] Երեմեան, էջ 18. նաեւ՝ Մալխասեան, էջ 37-38. նաեւ՝ Ա. Դումիկեան, «Հայաստանի պատմահոգեւոր ընկալումը XVII-XIX դարերի ֆրանսիացի հետազօտողնե-

ռուել են Հայաստանն ընդգրկող քարտէզներ, սովորաբար Պտղոմէոսի քարտէզի հիմքի վրայ, որտեղ դրախտը գտնուում է Հայաստանում[48]:

Աշխատանքն իմի բերելուց առաջ անդրադառնանք քարտէզների եւս մէկ խմբի, որոնք սոյն ուսումնասիրութեան առարկայ հանդիսացող հաւաքածուում ներկայացուած են երկու օրինակով:

Ալլէն Մալլէտի (1630-1706) «Տիեզերքի բացատրութիւնը» հինգհատորանի գրքի ֆրանսերէն օրինակը տպագրուել է 1683ին, իսկ գերմաներէն թարգմանութիւնը՝ 1719ին: Վրաստան-Հայաստան (Georgie-Armenie) քարտէզը ֆրանսերէն օրինակում կրկնուած է երկու անգամ՝ XC համարով՝ 211րդ էջում եւ XCI համարով՝ 213րդ էջում, իսկ գերմաներէն թարգմանութեան մէջ՝ XC եւ XCI միացեալ համարով: Քարտէզում նշուած են Ռուսաստանի հարաւային մասը, Վրաստանը եւ Հայաստանը (նշուած են նաեւ պարսկերէն՝ Gvrgistan անունով, եւ Armenie Tvrcomanie), որի կարեւոր քաղաքներից նշուած են Կարսը (Kars), Էրզրումը (Erzerum) եւ Երեւանը (Eriuan)[49]:

Զուգահեռ դիտարկումը թոյլ է տալիս ասելու, որ ՀԱԹի հաւաքածուի համար 108 եւ 109 քարտէզները նոյնպէս էջեր (կամ վերատպութիւններ) են Մալլէտի վերոյիշեալ գրքից: Մասնաւորապէս՝ համար 108 քարտէզը (նկար 9) ճշգրիտ կրկնութիւնն է նրա գրքի XCI քարտէզի (էջ 213):

Ի հաստատումն ասուածի նշենք, որ հաւաքածուում 8332/51 համարի տակ գրանցուած փորագրանկարում պատկերուած է Երեւանը (Erivan)՝ Արարատի յենքին: Պատկերի վերեւում ֆրանսերէնով գրուած է՝ «De L'Asie», որից ներքեւ՝ «Figure XCII.», իսկ վերեւի ձախ անկիւնում՝ գրքի էջը՝ 215[50] (նկար 10):

Համար 109 քարտէզը (Cvrdistan-Diarbeck) նոյնպէս սեւ-սպիտակ է եւ ունի նոյն չափերն ու քարտէզագրման նոյն մօտեցումները, որոնք բնորոշ են քարտէզ 108ին: Համար 109ի ընդգրկման տարածքները հիւսիսում հասնում են մինչեւ Վրաստան, հարաւում՝ Պարսից ծոց: Ինչպէս եւ համար 108ում, այստեղ նոյնպէս Հայաստանը նշուած է նաեւ «Թուրքոմանիա» անուամբ: Ընդ որում՝ քարտէզի ներքեւում՝ զարդարուն տուփիկի մէջ, որպէս տպագրման թուական նշուած է 1682ը (նկար 11)[51]:

Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ.-

Ա) Հայոց ազգագրութեան թանգարանի քարտէզների հաւաքածուն տպագրուած է ԺԷ.-ԺԹ. դարերում, սակայն դրանց մեծ մասը վերատպութիւն է աւելի հին քարտէզներից՝ հիմնականում Պտղոմէոսի քարտէզների

որի քարտէզներում», *Հայաստանի հանրապետութեան եւ մերձաւոր արտասահմանի*, էջ 44-52:

[48] Գալչեան, էջ 217-18. նաեւ նոյնի վերահրատարակութիւնը՝ էջ 215-16:

[49] Նոյն, էջ 183. նաեւ նոյնի վերահրատարակութիւնը՝ էջ 181:

[50] Տե՛ս՝ ծանօթ. 49:

[51] Տե՛ս՝ ծանօթ. 49:

(կամ դրանց վերատպութիւնների) հիմքի վրայ: Մեծ Հայքը եւ յարակից երկրամասերը պատկերող քարտէզները (համար 111, 112, 117, 120, 126 եւ 127) տպագրուած են ԺԹ. դարի քարտէզագրական չափանիշերով. քարտէզների աշխարհագարական յենքը արհեստագիտականօրէն առաւել ճշգրիտ է. ճիշտ են ներկայացուած լեռնագրութիւնն ու ջրագրութիւնը՝ լեռներն ու լեռնաշղթաները ստուերարկուած են, լեռնագագաթները՝ նշուած, գետային ցանցը ճիշտ է պատկերուած, ճիշտ են տրուած Վան, Ուրմիա եւ Սեւան լճերի ափագծերը եւն.), սակայն աշխարհագրական ընդգրկումը, վարչական բաժանումն ու տեղանունները տրուած են ըստ Պտղոմէոսի:

Բ) Փոքր Ասիան եւ յարակից տարածքները պատկերող քարտէզներց հինգը (105, 106, 107, 119, 121), ինչպէս նաեւ Հայաստանը եւ յարակից տարածքները պատկերող քարտէզներից երկուսը (108, 109) տպագրուած են ԺԵ.-ԺԶ. դարերում (կամ վերատպութիւններ են դրանցից) եւ բնականաբար՝ կազմուած են տուեալ ժամանակաշրջանի քարտէզագրական ոճով: Մասնաւորապէս՝ այս ժամանակաշրջանի քարտէզներին բնորոշ են վառ գոյները, ճոխ ու զարդարուն տուփիկը[52]:

Այս շրջանի քարտէզներում գետերը պատկերուած են երկուական թաւ գծերով եւ աւելորդ ալիքաւորումներով, լճերի ափագծերը շատ դէպքերում չեն համապատասխանում իրականին, լեռներն ու լեռնաշղթաներն ունեն իւրայատուկ ձեւաւորում՝ նման են ձեռքով նկարուած բլրակների ու բլրաշարքերի, իսկ երկրների սահմաններն ունեն խախտումներ: Սա բացատրւում է նրանով, որ վերածննդի դարաշրջանում, երբ սկսեցին տպագրուել քարտէզներ, դրանց հեղինակները հիմնականում օգտւում էին հին շրջանի քարտէզներից:

Գ) Համար 108, 109 128 քարտէզները բնօրինակներ են եւ այս տեսանկիւնից մեծ արժէք են ներկայացնում[53]:

Դ) Գլխաւորը՝ քարտէզները հանդիսանում են ժամանակի լաւագոյն գործեր (կամ դրանց վերատպութիւններ) եւ ներկայացնում են պատմաաշխարհագրական կարեւոր սկզբնաղբիւրներ՝ տուեալ տարածաշրջանի մասին եւ որոշակի ժամանակաշրջանում, առաւել եւս, որ արտացոլում են պատմական Մեծ եւ Փոքր հայքերի հետ կապուած պատմա-քաղաքական տարբեր, սակայն միաժամանակ տրամաբանօրէն իրար փոխլրացնող իրադարձութիւններ, որոնք լուսաբանուած են օտարերկրեայ հեղինակների կողմից:

---

[52] Գալչեան, էջ 24. նաեւ նոյնի վերահրատարակութիւնը՝ էջ 25:

[53] Լրացուցիչ հետազօտութիւնների ու վերլուծութիւնների արդիւնքում դրանց թիւը կարող է աւելանալ:



Նկար 1. Armenia, Colchis, Iberia, Albania & c.

Նկար 2. Byzantinisches Reich, östliches blatt՝ Բիւզանդական Կայս-րութիւն, արեւելեան թուղթ

Նկար 3. Albania, Iberia, Colchis, Armenia, Mesopotamia, Babylonia, Assyria

Նկար 4. Հայաստանը՝ բաժանուած չորս մասի՝ Յուստինիանոսի օրոք



Նկար 5. Tabvla Asia V եւ նկար 6. Regiones intra Mare Hyrcanum, Oxum Fl. Indicum Pelagus et Sin. Persicum Sit



Նկար 8. Carte Pays ou probablement a été le Paradis terrestre, la plaine de Scinhar et la Montagne sur laquelle l'Arche s'est arrété suivant celte Histoire

Նկար 7. Turquie d'Asie et les Provinces du Caucase



Նկարներ 9, 10 եւ 11

THE MAP COLLECTION OF THE ARMENIAN ETHNOGRAPHIC MUSEUM

(SUMMARY)

ARTAK ASATRYAN (sardarapatasatryan@gmail.com)

The article provides a brief overview of the maps donated by Hagop Djelalian and preserved in the Armenian Ethnographic Museum located in Sardarapat, Republic of Armenia. The paper sheds light on 27 maps which are directly or indirectly related to Armenia and its history. These maps were published in Europe (France, Britain, the Netherlands) between the 17th and 19th centuries.

The author categorizes these maps into four groups, namely those pertaining to a) Armenia Major (Mets Hayk) and its contiguous areas, b) Asia Minor and its contiguous areas, c) the military wars (particularly the Russo-Persian and Russo-Ottoman wars) and political developments of the 19th century, and d) biblical maps.

The author comments on the peculiarities of each map in terms of the borders of Armenia, the locations of mountains and the courses of its rivers.